



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան
«07» 05 2026 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 058 - 26

Նախաձեռնող՝

«ՆՍԹ ԱՐՔԻԹԵՔՉՈՒՐ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ
Երևան, Տպագրիչների 8-23

Գործունեությունը՝

Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծ
Երևան, Աջափնյակ վարչական շրջան,
Արագածոտնի մարզ Աշտարակ համայնք Սասունիկ բնակավայր

Առդիր՝ 11 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 058 - 26

«Օհ» Տպիսի 2026 թ.

**Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա
ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Ռազմավարական էկոլոգիական
գնահատման հաշվետվություն,
Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծ
Գտնվելու վայրը՝ Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Արագածոտնի
մարզ, Աշտարակ համայնք

Ներածական մաս. Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը (այսուհետ՝ գլխավոր հատակագիծ) մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի պատվերով, ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի և «ՆՍԹ Արքիթեքչուր Ստուդիո» ՍՊԸ-ի միջև, 2025 թվականի ապրիլի 11-ին կնքված պայմանագրի հիման վրա՝ համաձայն 2022 թվականի նոյեմբերի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՕ-441-Ն օրենքի հավելվածի 82-րդ կետի 4-րդ ենթակետի «դ» պարբերության: Ակադեմիական քաղաքի տրանսպորտային ցանցի նախագիծը, ներառյալ երթևեկության վերլուծությունը և մոդելավորման գնահատումը, միկրոսիմուլյացիոն մոդելավորումը և գլխավոր հատակագծի հիմնական շարժունակության համակարգերը մշակվել են «Սիստեմատիկա ԷսԱրԷլ» (Systematica Srl) ընկերության կողմից: Ակադեմիական քաղաք ստեղծելու անհրաժեշտությունն առաջացել է կրթության, հետազոտության և արդյունաբերության ու ծառայությունների մատուցման ոլորտների միջև կապ ստեղծելու նպատակից՝ ելնելով տնտեսվարող սուբյեկտների արդի պահանջները բավարարող ու առաջադիմական կրթություն և հետազոտություն ապահովելու նպատակով: Ակադեմիական քաղաքի միջոցով նախատեսվում է ստեղծել ենթակառուցվածքների այնպիսի ամբողջություն, որը նոր հնարավորություն կստեղծի տարբեր ոլորտներում ձեռք բերվող գիտելիքի փորձարկման և գործնական կիրառման համար:



Նկարագրական մաս. Երևանի Աջափնյակ և Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրի ընտրված վարչական տարածքներում Ակադեմիական քաղաքի կառուցումը պայմանավորված է ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով ամրագրված բուհերի խոշորացման և գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորման գործընթացով: Ակադեմիական քաղաքին առնչվող իրավական կարգավորումները սահմանվում են նաև «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով, որի 42-րդ հոդվածով ամրագրված են Ակադեմիական քաղաքի ստեղծման, զարգացման և կառավարման հիմնական սկզբունքները, ինչպես նաև շահառուների և պետական կառավարման մարմինների փոխհարաբերությունների հիմնական իրավական մեխանիզմները:

Ակադեմիական քաղաքը կառուցվելու է «ՋիԷմՓի Ինթերնեյշնլ ՋիԷմԲիԷյջ արքիթեքթթս ընդ Էնջինիերս» (gmp International GmbH Architects and Engineers) ընկերության կողմից մշակված հայեցակարգային նախագծի՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի հիման վրա: Հիմնադրությամբ փաստաթուղթը միտված է Երևանի և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրում Ակադեմիական քաղաքի հիմնադրմանը, որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական միջավայրի ապահովման եղանակ: «Ակադեմիական քաղաք» ծրագրի մշակման, իրականացման, համակարգման և հետագա կառավարման մարմին է հանդիսանալու Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ ստեղծված «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ):

Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը՝ հիմնվելով դրան հաջորդած գործընթացների ու իրականացված աշխատանքների վրա: Այն նպատակ ունի սահմանել և կարգավորել «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման, կառավարման և հետագա զարգացման միասնական շրջանակը, ներկայացնել ներգրավված պետական կառավարման մարմինների դերակատարությունը և պատասխանատվությունների բաշխումը, ինչպես նաև սահմանել նախագծման, իրականացման, կառավարման և մշտադիտարկման հիմնական սկզբունքները:

Ակադեմիական քաղաքի տարածքը գտնվում է Երևանի հյուսիս-արևմտյան մասում՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների արևմտյան եզրին, ընդգրկում է նաև Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրի արևելյան հատվածը՝ ընդհանուր առմամբ 682,9 հեկտար տարածք: Նշված տարածքի մոտ 90%-ը գտնվում է Երևանի վարչական սահմաններում, իսկ 10%-ը՝ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական տարածքում՝ համապատասխանաբար 620,1 և 62,8 հա մակերեսներով: Ակադեմիական քաղաքի տարածքի կենտրոնով անցնում է Սպանդարյան-Պոռոշյան երկաթուղային հատվածը: Երկաթուղու երկու կողմերում սահմանված է 100 մ անվտանգության գոտի: Երկաթուղին և անվտանգության գոտին տարածքը բաժանում են պայմանական «արևելյան» և «արևմտյան» հատվածների՝ համապատասխանաբար՝ 413,6 և 269,3 հա մակերեսներով: Տարածքն իրենից ներկայացնում է հիմնականում ազատ՝ չկառուցապատված և չուրբանիզացված հողատարածք, որտեղ առկա են փոքր չափերով տարբեր բնույթի կառույցներ: Տարածքում կան ոչ մետաղական հանքեր, որոնք զբաղեցնում են շուրջ 47 հա տարածք: Հողամասերի շուրջ 45%-ը բնակելի նշանակության ունեն, իսկ մնացածը գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլն:



Ակադեմիական քաղաքը դիտարկում է ոչ միայն որպես ուսումնական ու գիտական տարածք, այլև մտավոր ու մշակութային ժամանցի համար նախատեսված միջավայր, որը պետք է գործի 24-ժամյա ռեժիմով: Նախատեսված է բուհական տարբեր կլաստերներ՝ Տեխնոլոգիական, Բժշկական, Դասական, Ուսումնական, Արվեստների, Սպայական, Միջազգային, որոնք ներառելու են գրասենյակային և այլ հասարակական, մարզական ու գիտահետազոտական կենտրոններ, կրթական գործընթացի կազմակերպման համար համապատասխան տրանսպորտային, հետիոտնային, ինժեներական և սոցիալ-մշակութային ենթակառուցվածքներով: Ակադեմիական քաղաքի տարածքում նախատեսվում է տեղակայել մինչև 16 բուհ՝ Օրենքով նախատեսված մինչև ութ պետական խոշորացված բուհ և մինչև ութ մասնավոր կամ միջազգային բուհ: Այստեղ տեղափոխվելու են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, Հիմնադրամը, ինչպես նաև ըստ նպատակահարմարության՝ ոլորտին առնչվող այլ պետական և մասնավոր կառույցներ:

Ակադեմիական քաղաքի կառուցումը նախատեսվում է երկու փուլով: Առաջին փուլը ներառում է երկու ենթափուլ: 1-ին ենթափուլում՝ մինչև 2030 թվականը նախատեսվում է կառուցապատել 599 489 մ² տարածք, որը ներառելու է՝

- տեխնոլոգիական կլաստեր՝ 395 785 մ²,
- միջազգային համալսարան՝ 27 864 մ²,
- հանրակացարաններ 4250 ուսանողի համար՝ 98 260 մ²,
- հասարակական մշակութային կենտրոն՝ 77 580 մ²:

Երկրորդ փուլի ավարտը նախատեսվում է մինչև 2040 թվականը: Այդ փուլերի շրջանակներում իրականացվելու են նաև Ակադեմիական քաղաքին առնչվող ինժեներական ենթակառուցվածքներ: Կառուցապատվող ընդհանուր տարածքը կազմում է 2 600 310 մ²: Օգտատերերի ընդհանուր քանակը նախատեսվում է 112 768 մարդ, այդ թվում ուսանողների քանակը՝ 70 937:

Նախատեսվում է բնակելի ֆոնդի ստեղծում: Ակադեմիական քաղաքի տարածքում նախատեսված են հանրակացարաններ մոտ 19100 ուսանողների համար ու 300 բնակարան դասախոսների, գիտահետազոտողների ու վարչական աշխատակազմի համար: Հաշվի առնելով, որ կլաստերների աշխատակիցների մի մասը ցանկություն կունենա ձեռք բերել սեփականության իրավունքով բնակարաններ, անհրաժեշտ կլինի նաև աշխատակիցների համար կազմակերպել տեղամասերին մերձակա տարածքներում հիփոթեքային վարկավորման հատուկ պայմաններ: Կլաստերների գոյությունը անխուսափելիորեն հանգեցնելու է նաև հարակից համայնքային տարածքների զարգացմանը և տնտեսական գործունեության նոր տեսակների ծավալմանը: Հարևանությամբ գտնվող համայնքային կամ մասնավոր սեփականության հողերի վրա անկանոն շինարարությունից խուսափելու նպատակով ձևավորվելու է նաև տարածքի զարգացման ավելի ծավալուն պլան, որը կկարգավորի մերձակայքում շինարարության հարկայնությունը, դիզայնը, ինչպես նաև գործունեության տեսակները: Կազմակերպվելու են նոր ենթակառուցվածքներ՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կապի, աղբահանության համակարգեր, ճանապարհային ցանց:



Նախատեսվում է ենթակառուցվածքների՝ երկաթգծի, էլեկտրահաղորդման գծերի տեղափոխում, որը իրականացվելու է համապատասխան մարմինների հետ փոխադարձ համաձայնությամբ՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա:

Ակադեմիական քաղաքի գազամատակարարումը կատարվելու է համաձայն 31.10.2025 թ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված հ.01/18.1/8077-2025 տեխնիկական պայմանի:

Ակադեմիական քաղաքի համար կառուցվելու են նոր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր: Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող ջրամատակարարման համակարգի՝ ջրագծի կառուցումը պետք է համապատասխանեցվի «ՎԵՈԼԻԱ Ջուր» ՓԲԸ-ի հետ՝ նախապես ստանալով ջրամատակարարման տեխնիկական պայմանը: Ջրահեռացումն ապահովելու նպատակով նախատեսվում է կենտրոնացված մաքրման կայանի կառուցում, մինչ այդ նախատեսվում է համապատասխան հզորության մաքրման կայանների տեղադրում՝ ըստ ծրագրով նախատեսված փուլերի:

Դեպի Ակադեմիական քաղաք ավտոմոբիլային տրանսպորտի մոտեցումն ապահովելու է Երևան-Աշտարակ Մ1 ճանապարհը (M1), որը Հայաստանի մայրաքաղաք Երևանը միացնում է հանրապետության երկրորդ քաղաք Գյումրիին՝ շարունակվելով դեպի Բավրա և Հայաստան-Վրաստան պետական սահման: ԱԲ-ի հետ կապն ապահովելու համար նախատեսվում է նոր տրանսպորտային բազմաստիճան հանգույցների կառուցում՝ մոտ 1,5 կմ երկարությամբ: Ակադեմիական քաղաքի ներսում տեղաշարժը կազմակերպվելու է հեծանիվներով, էլեկտրական տրանսպորտով և այլ եղանակներով:

Ակադեմիական քաղաքի արևելյան հատվածը հարում է Սիլիկյան գերեզմանատան տարածքի սահմաններին և հետագա կառուցապատման դեպքում կառուցապատվող տարածքների և գերեզմանատան սահմանների միջև պետք է ստեղծել 300 մ շառավղով սանիտարական կանաչապատված գոտի և տարածքը ցանկապատել՝ ցանկապատի ամբողջ երկայնքը կանաչապատելով ծառերով:

Մասնավոր անձանց, բնակիչներին պատկանող հողատարածքները դիտարկվելու են որպես պետական գերակա շահ, որոնց փոխհատուցումը կկատարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ըստ ՌԷԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Ակադեմիական քաղաքի տարածքում ստորջրյա հորիզոնները բացակայում են: Ստորգետնյա ջրերն ըստ տեղադրման, սնման և բեռնաթափման պայմանների, պատկանում են գրունտային տեսակին: Ուսումնասիրվող տեղամասում գրունտային ջրերը տեղադրված են 140 մետր խորության վրա: Իրականացված հետազոտությունների պահին գրունտային ջրերի հորիզոն ոչ մի փորվածքում չի հայտնաբերվել:

Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում դիտարկվում է ՌԷԳ փաստաթղթով նախատեսվող գործողությունների իրականացման ընթացքում (շինարարության և շահագործման փուլեր) առաջացող տարբեր վտանգավորության դասի թափոնների ճշգրիտ կառավարում՝ թափոնների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, ինչպես նաև համայնքների աղբավայրերի լրացուցիչ

ծանրաբեռնվածության ավելացումը կանխարգելելու նպատակով: Թափոնների կառավարումն իրականացվելու է «Թափոնների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքների և այլ ենթաօրենսդրական իրավական ակտերի պահանջներին համապատասխան: ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N1343-Ն որոշման համաձայն կառուցապատողների կողմից պետք է իրականացվի թափոնների փաստացի քանակների հաշվառում: Վտանգավոր թափոնների վնասազերծումը իրականացվելու է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

Ծրագրի իրականացման ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում կլինի ծրագրով նախատեսված գործունեությունների իրականացման շինարարության փուլերում՝ կապված շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Սոցիալական Ակադեմիական քաղաքում դասավանդման և ուսուցման համար ներգրավվելու են վարչական աշխատողներ, ուսանողներ, դասախոսներ և գիտնականներ:

Համաձայն ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկությունների՝ Ակադեմիական քաղաքին հատկացված տարածքում առկա են հետևյալ հանրապետական նշանակության հուշարձանները՝

- Դամբարանադաշտ մ.թ.ա. 2-1, բնակատեղիի արևմտյան մասում, երկաթուղու Սիլիկյան կայարանից 0,5 կմ հյուսիս,

- Դամբարան-1, մ.թ.ա. 2-1 հազ., երկաթգծից 30 մ արևմուտք,

- Դամբարան-2, մ.թ.ա. 2-1 հազ., երկաթգծից 50 մ արևմուտք,

- Դամբարան-3, մ.թ.ա. 2-1 հազ., երկաթգծից 50 մ արևմուտք,

- տարածքում առկա է նաև բնության մեկ հուշարձան՝ քարե պատերով ջրվեժ, որը պետք է հմտությամբ ներառել կառուցապատման նախագծում:

Պեղումներ են իրականացվում Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասում գտնվող բնակատեղիում՝ ըստ պեղումների հայտին կից պլան-սխեմայի (պետ. ցուցիչ՝ 1.1.2, պահպանական գոտու տարածքը՝ 1,6 հա): Պեղումների արդյունքում բացահայտվել է քարակերտ ճարտարապետությամբ Երևանի, թերևս նաև Հայաստանի ու Հարավային Կովկասի հնագույն հուշարձաններից մեկը՝ Սիլիկյան բնակատեղին: Մինչ այժմ պեղվել են ավելի քան 20 բոլորածև հատակագծով, զանգվածեղ քարերից կառուցված հիմնապատերով, 2-6 մ տրամագծով կացարաններ:

Պահանջվում են հուշարձանի համակողմանի և պարբերաբար պեղումներ, որոնք կարող են դառնալ միջազգային հնագիտական արշավախմբերի և ուսանողների ամառային դպրոցների համար հրապուրիչ վայր: Ակադեմիական քաղաքի տարածքում փաստագրված արժեքավոր պատմամշակութային արժեքների հետագա պահպանման և նախատեսվող կառույցների հետ ինտեգրման համար նախապես պետք է կատարվեն այդ հուշարձանների ամրակայման աշխատանքներ, որոնց առաջադրանքները, էսքիզային ու աշխատանքային նախագծերը և ամրակայման աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան արտոնագրված և լիցենզավորված մասնագետների և կազմակերպությունների կողմից՝ համաձայնեցնելով ԿԳՄՍ նախարարության հետ:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկությունների՝ Ակադեմիական քաղաքի համար նախատեսված տեղամասում բացակայում են վտանգավոր ինժեներատեխնիկական պրոցեսները, ինչպիսին են սողանքները, սելավները, հեղեղվող տեղամասերը և այլն: Երկրաբանական պրոցեսները և երևույթներն արտահայտվում են հստակ տեսանելի լանջային էրոզիայի (հողմնահարման) տեսքով և անանուն ձորակներում, որոնք տարածվում են հյուսիսից դեպի հարավ ուղղությամբ: Վտանգավոր պրոցեսները նաև ներկայացված են ճահճացման երևույթներով, որոնք տարածվում են հիմնական տարածքի հարավային մասում և «Հայֆիլմ»-ի տարածքի հյուսիս-արևմտյան մասում: Ճահճացման երևույթները արհեստական (մարդածին) ծագում ունեն և հետևանք են գյուղատնտեսական գործունեության, տարածված են 9 հա տարածքի վրա: Վտանգավոր պրոցեսները ներկայացված են նաև քարաթափման երևույթներով, որոնք լայն տարածում ունեն գործող և լքված հանքերի կարյերների (40 հա) եզրերին: Դրանք նույնպես կրում են մարդածին բնույթ: Ուսումնասիրվող ամբողջ տեղամասում, 102 հա մակերեսով, տարածված են շինարարական թափոնների լցակույտեր:

«Ակադեմիական քաղաք» օբյեկտի տարածքի տեխնածին և երկրաբանական պայմանները ընդհանուր առմամբ բարենպաստ են:

Համաձայն սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող գոտին (Ակադեմիական քաղաքը) գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որի սահմաններում սեյսմիկ վտանգի հաշվարկային մակարդակը կազմում է 0.4g:

Հաշվի առնելով Երևան քաղաքի բարձր սեյսմիկ գոտում գտնվելը, բոլոր ռիսկերը, որոնք կապված են խոշոր համալսարանական համալիրի կենտրոնացված կառուցման, ենթակառուցվածքների, օրինակ, լաբորատորիաների վնասման վտանգի հետ, անհրաժեշտ է նախատեսել ավելի խիստ սեյսմակայուն նորմեր ու արտակարգ իրավիճակների պլան, ներառելով մեծաքանակ ուսանողների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր համայնքներում՝ Երևանում և Արագածոտնի մարզպետարանում անցկացվել են հանրային լուծումներ, որի ընթացքում մասնակիցները հավանություն են տվել Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի՝ որպես հիմնադրության փաստաթղթի կազմմանը և Ակադեմիական քաղաքի կառուցմանը: Փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները:

Նախագիծը Հայաստանի Հանրապետության խոշորագույն ռազմավարական նախաձեռնություններից է՝ միտված ստեղծելու համաշխարհային մակարդակի գիտակրթական, հետազոտական, նորարարական և տեխնոլոգիական համակարգ: Նախագծի երկարաժամկետ տեսլականն է ձևավորել ինտեգրված, ժամանակակից, միջազգային համագործակցությանը բաց և մրցունակ համալսարանական քաղաք, որը կդառնա տարածաշրջանի առաջատար կենտրոնը գիտության, տեխնոլոգիաների, ձեռնարկատիրության և մարդկային կապիտալի զարգացման ոլորտներում՝ միավորելով համալսարանները, գիտական կազմակերպությունները, ստարտափներն ու արտադրությունը՝ միմյանց հետ օրգանական եղանակով համագործակցող և փոխադարձ առաջխաղացմանը միտված միջավայրում: Ակադեմիական քաղաքը ապահովելու է բարձրագույն կրթության, գիտության և արդյունաբերության խոր ու նպատակային ինտեգրումը՝ խթանելով նորարարական և տնտեսության վրա ազդեցություն ունեցող

տեխնոլոգիաների զարգացումը և ստեղծելով միջավայր, որտեղ ձևավորվում են ապագայի մասնագետներն ու հետազոտական խմբերը: Այն հանդես է գալիս որպես բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում համակարգային բարեփոխումների առանցքային հանգրվան՝ նոր համակարգը զինելով ժամանակակից ֆիզիկական ենթակառուցվածքներով, համագործակցությունը խթանող միջավայրով և գիտելիքի շրջանառության արդյունավետ հարթակներով:

Ծրագրի իրականացումը կնպաստի Երևանի կենտրոնի բեռնաթափմանը, բուհական կրթության որակի բարձրացմանը՝ միջազգային չափանիշներին համապատասխան՝ հնարավորություն տալով ընդգրկվել միջազգային վարկանիշային 500 բուհերի շարքում, նոր տեխնիկա-տեխնոլոգիական հնարավորությունների կիրառման արդյունքում ուսանողների գիտական մակարդակի բարձրացմանը և գիտելիքների պրակտիկ կիրառմանը, կբարձրացնի Հայաստանի Հանրապետության դերը միջազգային կրթական համակարգում, դարձնելով այն գրավիչ նաև արտասահմանյան ուսանողների ներգրավման համար, Երևանի և կից գտնվող համայնքների համաչափ տարածական զարգացմանը, տարածքի և մոտակա բնակավայրերի բնակիչների միջև փոխադարձ ինտեգրման և համագործակցության զարգացմանը, Աշտարակ համայնքում և կից համայնքներում նոր աշխատատեղերի ստեղծմանը, համայնքի և կից գտնվող բնակավայրերի բնակչության կենցաղային պայմանների բարելավմանը, կենսամակարդակի բարձրացմանը: Ամառի, աղբակույտերով լի չօգտագործվող տարածքը կվերածվի գեղեցիկ, բարեկարգ տարածքի՝ խնամված կանաչ գոտիով, գրավիչ լանդշաֆտային փոփոխություններով:

Ծրագրի ՌԷԳ հաշվետվությունում նախատեսված բնապահպանական միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

ՌԷԳ հաշվետվությամբ ամրագրվում են նախատեսվող գործունեությունների արդյունքում «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով սահմանված՝ մթնոլորտային օդի պահպանության նպատակով իրականացվող միջոցառումները:

Ջերմոցային գազերի ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը նպաստող արտադրությունների, ջեռուցման համակարգերի կիրառում, ջերմոցային գազեր կլանող կարողությունների ստեղծում, կիրառում, էներգիայի այլընտրանքային՝ նվազ արտանետումներ առաջացնող տեխնոլոգիաների ներդրում: Ակադեմիական քաղաքի տարածքում արևային էներգիայի ստացման նպատակով նախատեսվում են արևակայանների և արևային պանելների տեղադրում՝ որպես էլեկտրաէներգիայի այլընտրանքային միջոց:

Նախատեսվող գործունեությունների իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է՝

✓ Ակադեմիական քաղաքի տարածքում ջրահոսքերի և ջրահավաքների կառուցման ընթացքում հաշվի առնել վերջիններիս սանիտարական պահպանման գոտու սահմանները՝ ելնելով բնական, կլիմայական և հիդրոլոգիական պայմաններից,

✓ կառուցապատման ժամանակ պատկան մարմինների հետ համատեղ նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված տարածքում առկա Բաասի-էջմիածին ջրանցքի, Մերձավանին պատկանող ոռոգման փակ ցանցի և Սասունիկի ոռոգման ներտնտեսային ցանցի, ինչպես նաև «Հայֆիլմ»-ից մինչև գերեզմանների տարածք՝ Նոր

Դալմա ջրանցքի պահպանմանը,

✓ նախագծային փաստաթղթերում նախատեսել անձրևաջրերի հոսքի ուղղորդման և կուտակման լուծումները,

✓ համապատասխան հզորության մաքրման կայանների կառուցում՝ ելնելով տվյալ կառույցի ծանրաբեռնվածությունից, ջրային ռեսուրսների օգտագործման ծավալից՝ բացառելով արտադրական և կենցաղային նպատակներով օգտագործվող կեղտաջրերի բաց թողումը շրջակա միջավայր,

✓ տեղումներից առաջացող ջրային հոսքերը համապատասխան տեխնոլոգիական լուծումներով օգտագործել ոռոգման և ընթացիկ կարիքների համար,

✓ մաքրման կայանից դուրս եկած մաքրված հոսքաջրերն օգտագործել կանաչապատ տարածքների ոռոգման նպատակով:

Նախատեսվող գործունեությունների իրականացման ընթացքում հողային ռեսուրսների պահպանման նպատակով անհրաժեշտ է՝

✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հանքավայրերի տարածքների ռեկուլտիվացիա՝ համապատասխանեցնելով բնակելի և հասարակական գոտու պահանջներին,

✓ հողի բերրի շերտը հանել և պահել համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 1-ի՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու» և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

✓ նախագծային լուծումներում նախատեսել շինարարական հոսքաջրերի՝ հողային ռեսուրսների մեջ ներթափանցումը բացառելուն ուղղված միջոցառումներ,

✓ հակասելավային, հակահեղեղային պաշտպանական միջոցառումների կիրառում,

✓ բարդ ռելիեֆային տեղամասերում էռոզիա առաջացնող գործոնների չեզոքացման, կանխարգելիչ պաշտպանական միջոցառումների կիրառում:

Նախատեսվող գործունեությունների իրականացման հետևանքով կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու համար անհրաժեշտ է՝

✓ մինչև հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործունեությունների շինարարական աշխատանքները, կատարել տարածքների ուսումնասիրություն՝ ուղղված ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների աճելավայրերի և կենդատեսակների բնադրավայրերի հայտնաբերմանը, հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների պարտադիր իրականացումը,

✓ ճահճային տարածքներում գործողությունների իրականացման դեպքում ռեկուլտիվացիան իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տարածքը համապատասխանեցնելով բնակելի և հասարակական գոտու պահանջներին,

✓ ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթոշնային արգելափակոցների տեղակայում՝ թոշունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով:

Թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով անհրաժեշտ է՝

✓ կատարել տարածքում առկա թափոնների տեսակավորում, տարանջատում դասակարգում՝ առաջնորդվելով ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N 430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների

ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների պահանջներով,

✓ թափոնների տեղափոխումը կատարել համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից, նախատեսել վտանգավոր թափոնների վնասագերծում մասնագիտացված կազմակերպությունների միջոցով,

✓ շինարարության ընթացքում թափոնների տեղափոխումը կատարել՝ բացառելով վերջինիս մեծածավալ բեռնվածքը և երկարատև երթուղով տեղափոխումը, տարածքում վերահսկողական մեխանիզմների ներդրում՝ շինադրով լցված բեռնատարների ելումուտը կարգավորելու նպատակով,

✓ կենցաղային աղբի համար տեսակավորման աղբամանների նախատեսում՝ մարդկանց թվին համապատասխան, աղբահավաք տարողությունների, կոնտեյներների ժամանակին լվացում, ախտահանում:

✓ ՌԷԳ շրջանակներում նախատեսվող գործողությունների տարածքներում պատմամշակութային և բնության հուշարձանները պահպանելու, վնասակար ազդեցությունները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է՝

✓ կատարել հուշարձանների ֆիզիկական գույքագրում, գնահատում և պահպանական գոտու կարգավորում,

✓ կառուցապատման ընթացքում տարածքում առկա «Քարե պատերով ջրվեժ» բնության հուշարձանի ինտեգրում նախագծային լուծումներում,

✓ դամբարանների տարածքի կառուցապատում, եթե դրանք արժեքավոր ճարտարապետական կառույցներ չեն,

✓ նախնական տեղազննման արդյունքում բացահայտված կառուցապատման առաջին՝ հյուսիսային հատվածում գտնվող հնավայրերի և պոստենցիալ պեղման գոտիների հետազոտում,

✓ տարածքում գտնված բնակատեղիի հատվածում բացառել կառուցապատումը՝ այն ինտեգրելով ճարտարապետական լուծումներում,

✓ նախագծային լուծումները կատարել հնագետի հետ համաձայնեցմամբ՝ հնագիտական միավորների ամբողջականությունն ապահովելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում ստանալ ԿԳՄՍ նախարարության դրական եզրակացությունը,

✓ շինարարական և տարածքում կատարվող քարահավաքման աշխատանքների իրականացման ընթացքում հնավայրի պեղված կառույցների քարերը չվտանգելու նպատակով ներդնել վերահսկման մեխանիզմներ,

✓ բացի հայտնաբերված հնագիտական շերտերից շինարարական աշխատանքների ընթացքում այլ հնարավոր հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները, տեղեկացնել տեղական իշխանություններին և ԿԳՄՍ նախարարությանը, իսկ շինարարական աշխատանքները վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության) կողմից թույլտվության տրամադրումը:

Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է՝

✓ ՌԷԳ փաստաթղթով նախատեսվող գործունեությունների շրջանակներում կիրառել ձայնակլանիչ նյութեր և կոնստրուկցիաներ,

✓ կառուցապատման ընթացքում կիրառել աղմուկի ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,

✓ տեխնիկայի և մեքենաների համար կիրառել համապատասխան խլացուցիչներ,

✓ պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:



✓ շենքերի և արտադրական տարածքներում նախատեսել ժամանակակից տեխնոլոգիաներ և սարքավորումներ, որոնց աղմուկի և թրթռման մակարդակները կլինեն նվազագույն, վերահսկել աղմուկի և վիբրացիայի նորմերը:

Մարդու առողջությունը պահպանելու, աշխատանքի ճիշտ կազմակերպումը և անվտանգությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է՝

✓ նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները, ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և ապահովել հասարակական անվտանգությունը,

✓ տեխնոլոգիական կլաստերի կազմակերպման ժամանակ ապահովել ծրագրի դրույթներով նախատեսված գործունեությունների՝ ագրոհամալիրի սանիտարապաշտպանիչ գոտիները,

✓ անհրաժեշտության դեպքում ագրոհամալիրում կիրառել հակաանասնահամաճարակային տարեկան և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման հրահանգներով սահմանված միջոցառումներ,

✓ ագրոհամալիրի կենդանիների բուծումը, կերակրումը, անասնաբուժական դեղամիջոցների կիրառումը և այլ ծառայությունները կատարել ՀՀ գործող անասնաբուժական նորմերի պահպանմամբ,

✓ կենդանական ծագման արտադրանքի տնօրինումը (հավաքումը, պահումը, փոխադրումը, իրացումը, վերամշակումը, ոչնչացումը) և (կամ) պահեստավորել այնպես, որ երաշխավորվի արտադրանքի ամբողջական անվտանգությունը, կանխվեն մարդկանց և կենդանիների առողջությանը սպառնացող վտանգի առկայությունը և շրջակա միջավայրի վարակման հնարավորությունը:

Սոցիալական գործոնների ազդեցությունների շրջանակում անհրաժեշտ է նախատեսել՝

✓ բնակիչների կողմից օգտագործվող օտարման ենթակա տարածքների հաշվառում՝ դրանց ՀՀ օրենսդրության շրջանակներում լուծում տալու, փոխհատուցումը որոշելու նպատակով,

✓ գործող և լքված հանքերի կոնսերվացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվի առնելով ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման, սահմանափակման, արգելման պահանջները,

✓ մասնավոր կամ իրավաբանական անձանց գույքի հաշվառում և փոխհատուցման պայմանագրերի կազմում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան,

✓ գոյություն ունեցող ենթակառուցվածքների ապամոնտաժում, տեղափոխում համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ, փոխադարձ համաձայնությամբ՝ պետական ծրագրով սահմանված պայմանագրերի հիման վրա,

✓ ապահովել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N 426-Ն որոշման պահանջները,

✓ առաջնորդվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 15-ից 19-րդ հոդվածներով սահմանված դրույթներով և պահանջներով, հատուկ ուշադրություն դարձնելով օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերին, Ակադեմիական քաղաքի ողջ տարածքը, մասնաշենքերի մուտքերը և բոլոր սենյակները



հարմարեցնել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններ և միջավայր:

Տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով անհրաժեշտ է՝

- ✓ իրականացնել կառուցապատումից դուրս մնացած ազատ տարածքների բարեկարգում,
- ✓ ուսանողության և բնակիչների համար կազմակերպել համապատասխան կահավորանքով հանգստի գոտիներ,
- ✓ հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտումը, տարածքների վնասումն ու աղտոտումը,
- ✓ բացառել ՌԷԳ հաշվետվությամբ ներառված տարածքից դուրս կառուցապատման աշխատանքները, լանդշաֆտային փոփոխությունները,
- ✓ օգտագործել լանդշաֆտային բույսեր տեղական տնկարաններից,
- ✓ խոտածածկ հատվածներում ապահովել ջուր խնայող բույսերով,
- ✓ անձրևաջրերի հոսքի ուղղորդում և կուտակում՝ կանաչապատ տարածքի ոռոգման նպատակով,
- ✓ չկաչող ծառերն ու բույսերը փոխարինել նորերով:

Փորձաքննական պահանջներ

1. ՌԷԳ հաշվետվությամբ սահմանված տարածքներում գործունեություն սկսելուց առաջ իրականացնել տարածքի կենսաբազմազանության ուսումնասիրություն և Կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել համապատասխան միջոցառումների կատարումը,

2. հիմնադրությային փաստաթղթով սահմանված տարածքներում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված գործունեության տեսակներ իրականացնելիս մինչև նախատեսվող գործունեություն սկսելը իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն փորձաքննության:

ԵՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՆՍԹ արքիթեքչուր ստուդիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



Վահագնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Քրիստինե Հարությունյան